


ՀԱՆԳԻՍՑ ՄԵԾԱՐԳՈՅ ՀԱՐՑՆ

Հ. Բ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ Հ. Գ. ԳԱՐԱՆՖԻԼԵԱՆ +

Հ. ԳԵՐԵԳՈՎԻՆ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ




Ծնած է 15 մարտ 1878 Կարնոյ քաղաքի մէջ. 13 տարեկան էր, երբ ծնողքը ուղարկեց զինքը Վիեննա (5 յունուար 1892): Հոս Մխիթարեան Կղերանոցի մէջ կը կատարէ իր ուսմանց եւ կրթութեանց ընթացքը. 6 հոկտ. 1895 կը դուրսանաւ Մխիթ. Միաբանութեան, եւ 23 դեկտ. 1900 կ'ընդունի քահանայական ձեռնադրութիւնը:

Գործնական ասպարէզի վրայ կը տեսնենք զինքը օգնական վարիչ Կղերանոցի (1900). 1903ին կ'ուղարկուի Չմիւռնիա իբրեւ ուսուցիչ Մխիթ. Վարժարանի: 1909ին կ'առաքուի Կարին, կը գործէ նոր բացուած Մխիթ. Վարժարանին մէջ: 1915 նոյեմբերին, երբ տեղահանուած էր Կարնոյ հայ բնակչութիւնը, Մխիթարեան Հայրերը կը մեկնին Կ. Պոլիս: Հ. Յովնանեան կը մնայ մինչեւ 1922 քաղաքս. ապա կը վերադառնայ Վիեննա: 1924ին հրաման կ'ընդունի մեկնելու Ռումանիա, հովուելու Կաթողիկէ Հայրեր: 1929—1935 կը գտնենք զինքը Պլովդա (Բուլղարիա), իբրեւ մեծաւոր Մխիթարեան Վարժարանին: 1935ին կ'առաքուի Միւրիա-Լիբանան, բանալու Մխիթարեան դպրոց մը: Հ. Յովնանեան կը յաջողի բանալու դպրոց մը ի Պէյրութ: Այս տեղ մնաց ան մինչեւ 1948, երբ հիւանդութիւն մը հարկադրեց Միւրիանութեանս Վարչութիւնը կանչելու զինքը Վիեննա, դարձանուելու համար:

Վախճանեցաւ ի Տէր 3 յունիս 1954: Մեծ են Հ. Յովնանեանի վաստակները Միւրիանութեանս համար: Ան անխոնջ աշխատասէր էր. ան սիրեց ազատ պահելն աւազակործել թարգմանելու հոգեշահ գիրքեր. անոնցմէ լոյս տեսած են.

- 1. Վարք Ճեմա Գալլանի կուսին, Վիեննա 1929:
- 2. Վարք Ս. Թերեզայ Յիսուսի, Պլովդի 1933:
- 3. Վարք Ս. Մարգարիտա - Մարիամ Աւարտի, անդ, 1933:
- 4. Մեկնութիւն Ս. Պատարագի, անդ, 1934:

Հ. ԳԵՐԵԳՈՎԻՆ Վ. ԳԵՐԵՆՖԻԼԵԱՆ



Ծնած է Կ Պոլիս 24 նոյեմբեր 1877. աւագանի անունով՝ Արմենակ: Վիեննա ժամանած է 1889 սեպտ. 17ին: Ի ընդ ուշիմ՝ մեծաքայլ յառաջացաւ ուսումնական ընթացքին մէջ: Ուխտեց 6 հոկտ. 1895 եւ քահանայ ձեռնադրուեցաւ 23 դեկտեմբեր 1900: Բնաւորութեամբ աշխոյժ. լեզուներ սորվելու ընդունակութեամբ հմտացաւ ան 8 հին եւ նոր լեզուներու: Երբ ոտք դրաւ գործնական ասպարէզ, հրապուրեց զինքը դաստիարակութիւնը. ան նուիրուեցաւ կրթական գործի: Միւրիանութիւնը ուղարկեց զինքը 1907ին Այոթն, անկէ անցաւ Չմիւռնիա եւ ասկէ Կոստանդնուպոլիս գործելու Մխիթարեան Դպրոցներու մէջ: 1922ին կը գտնենք զինքը Կեռլա հայաքաղաքը, ուր հայ Որբանոցի հայերէնի ուսուցիչ է. կարճ ժամանակի մէջ իր դասարանը հայախօս կ'ընէ. քննութեան ժամանակ երբ թաղականներէն մէկը զիտողութիւն կ'ընէ, թէ հունգարա-հայ որբերը կեանքի համար հունգարերէնի եւ ոչ հայերէնի պէտք պիտի ունենան, կը զգայ Գարանֆիլեան, թէ սխալ ասպարէզի վրայ կը գործէ. կը թողու քաղաքը եւ կը մեկնի Վիեննա: Կը յանձնուի իրեն դասախօսել Կղերանոցի մէջ. կը կարգուի գործակալ Մայր վանքին: 1937ին կ'ուղարկուի Գահիրէ իբրեւ մեծաւոր վանատան եւ ուսուցիչ Մխիթարեան Վարժարանի. կը սիրէ միջավայրը եւ կը մնայ հոն մինչեւ մահը՝ 14 փետրուար 1955:

Թէպէտ դպրոցական-կրթական ասպարէզի վրայ, բայց եւ այնպէս կը բարգաւաճէ նաեւ գրական գործունէութիւն:

- Ան հիմնեց Կ. Պոլիս 1911ին «Ուսումնաբան» դպրոցական ամսաթերթը, որուն խմբագրութիւնը վարեց մինչեւ 1915, երբ դադրեցաւ:
- Իր գրական աշխատութիւններէն կը յիշեմ:
- 1. Իննօրեայ պատրաստութիւն Սրտին Յիսուսի, թարգմանուած ոսկեղարեան հայերէնով եւ լոյս տեսած ի գիրս՝ Հ. Յ. Քոստան, Իննօրեայ պատրաստութիւնք տօնից Ս. Կուսին, Վիեննա 1901, էջ 63—106:
- 2. Հ. Գեղէր, Սկզբնաւորութիւնք բիւզանդեան բանակաթեմերու գրութեան, Վիեննա 1903:
- 3. Հ. Պետերսըն, Նպատակ մը հայ լեզուի պատմութեան, անդ, 1904:
- 4. Տիգրան Բ. եւ հայ-լուկուլեան պատերազմները ըստ Կ. Էքհարդի. աշխատասիրութիւն, 1926:
- 5. Համառօտ ընդհանուր պատմութիւն ի պէտս բարձրագոյն նախակրթարաններու. Ա.—Գ. մասեր, Գահիրէ 1944—1949:
- 6. Հուսկ բանք. Գահիրէի Վիեննական Մխիթարեան Վարժարանի աշակերտութեան ուղղեալ, Գահիրէ 1946:
- 7. Նոր Կտակարան (Չորս Աւետարաններ եւ Գործք Առաքելոց). թարգմանութիւն արդի աշխարհաբարով հանդերձ մեկնութիւններով, Գահիրէ 1950:

«Յիշատակք Արդարոց օրհնութեամբ»:  
Հ. Ն. Ա.